ՈՐՈՇՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-18/9 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

Ք. Երևան 08.11.2018թ. Ժամը 15:30

Հանձնաժողովի նախագահ՝
ՎԱ գործերի կառավարչի տեղակալ՝ Ա. Պապիկյան

Անդամներ՝
ՎԱ ԳԿ շահագործման բաժնի պետ՝ Լ. Կարապետյան

ՎԱ ԳԿ շահագործման բաժնի ավագ մասնագետ՝ Լ. Մաղդեսյան

Հանձնաժողովի քարտուղար՝

ՎԱ ԳԿ մատակարարման բաժնի

գնումների ավագ գործակալ՝ Կ. Սերոբյան

---

1. « ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-18/9 » ծածկագրով մրցույթի հայտերի ներկայացման և գնահատման մասին

1.1 Հայտերը բացվել են 2018 թվականի նոյեմբերի 8-ին, էլեկտրոնային եղանակով՝ www.eauction.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով:

1.2 Հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները:

N	Մասնակիցների անվանումները	Էլեկտրոնային փոստի հասցե
1	« Նորմա Պլյուս» ՍՊԸ	normaplusarmenia@gmail.com
2	«Ռեֆորս գրուպ» ՍՊԸ	ReForceGroupllc@gmail.com

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

2.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

3. Տեղեկատվություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ

Հայտերի վերաբերյալ 29.10.2018թ-ին և 30.10.2018թ-ին ստացվել են հարցումներ, որոնց սահմանված կարգով և ժամանակին տրվել են պարզաբանումներ:

Ամսաթիվ	Հարցում	Պարզաբանում

29.10.2018թ	Հարգելի գործընկեր, խնդրում ենք տալ պաշտոնական պարզաբանում մուտքի քարտերի տեխ. բնութագրում հետևյալ պահանջների վերաբերյալ. · Ձեզ անհրաժեշտ են մագնիսական թե RFID (Radio Frequency IDentification) քարտեր: Առաջինի դեպքում քարտը պետք է անցկացնել սարքի միջով, երկրորդի դեպքում քարտը սարքին մոտեցնելիս է ինֆորմացիան փոխանցում սարքին: · XM3 Microprox սարքի, որ մոդելի համար են նախատեսված քարտերը, ստորև բերված են մոդելները՝ · XM3 stand alone single technology EM 125 kHz · XM3 stand alone dual technology EM + HID · XM3 stand alone dual technology EM + Mifare · XM3 single door Cross Point 125 kHz · XM3 online single technology EM 125 kHz · XM3 online dual technology EM + HID · XM3 online dual technology EM + Mifare	Հարգելի գործընկեր, Վարչապետի աշխատակազմի կարիքների համար անհրաժեշտ է RFID (Radio Frequency IDentification) քարտեր, xm3 microprox 125 Կhg, որը համատեղելի կլինի DataCard SP75 Plus սարքին, ինչպես նշված է տեխնիկական բնութագրում:
30.10.2018թ	Հարգելի գործընկեր, խնդրում ենք նաև հստակեցնել հետևյալ կետերը, լիովին համապատասխանող ապրանք մատակարարելու համար · Եթե քարտը RFID տեսակի է, ապա ինչ չիպով է աշխատում (օրինակ՝ TK4100, mifare classic 1K և այլն) · Արդյոք դռան համակարգի վրա առկա է կոդավորում (encryption on the door system)	Հարգելի գործընկեր, Վարչապետի աշխատակազմի կարիքների համար անհրաժեշտ է RFID (Radio Frequency IDentification) քարտեր, xm3 microprox 125 Կhg, որը համատեղելի կլինի DataCard SP75 Plus սարքին, ինչպես նշված է տեխնիկական բնութագրում:Տեղեկացնում ենք նաև, որ դռների վրա կոդավորում առկա չէ:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

4. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ

4.1 Մասնակիցների գնային առաջարկները հետևյալն են.

Չ/Բ համար	Անվանում	Մասնակիցների անվանումը	Նախահաշվային գին	Գինն առանց ԱԱՀ	Գինն ներառյալ ԱԱՀ
1	մուտքի քարտեր	« Նորմա Պլյուս» ՍՊԸ	425 000	325 000	390 000
		«Ռեֆորս գրուպ» ՍՊԸ		425 000	425 000

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

5. Ընթացակարգի մրցույթի գնահատման արդյունքների վերաբերյալ

5.1 Հիմք ընդունելով մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը, հանձնաժողովը բավարար գնահատեց «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ի և «Ռեֆորս գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

6. « ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-18/9» ծածկագրով մրցույթի նիստի արդյունքների ամփոփման մասին

Հանձնաժողովը որոշեց՝

6.1 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

Չ/Բ համար	Մասնակիցների զբաղեցրած տեղը	Մասնակիցների անվանումը
1	1	« Նորմա Պլյուս» ՍՊԸ
	2	«Ռեֆորս գրուպ» ՍՊԸ

6.2 Ոչ ավտոմատ եղանակով առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցել՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել առաջարկված ապրանքի անվանումն ու տեխնիկական բնութագիրը:

6.3 Էլեկտրոնային եղանակով՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

7. **<u>Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի վերաբերյալ</u>**

7.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա ք. Երևան, Կառավարական թ. 1 շենք, 18 սենյակ հասցեում, սույն արձանագրության 6.2 և 6.3 կետերով սահմանված փաստաթղթերի ներկայացման ժամկետի ավարտի հաջորդ աշխատանքային օրը, ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Նախագահ՝ Ա. Պապիկյան

Անդամներ՝ Լ. Կարապետյան

Լ. Մաղդեսյան

Քարտուղար՝ Կ. Սերոբյան